



## Մխիթար Գոշ

### Գիրք Դատաստանի

5

ՄԿԻՉԲՆ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ Ի ԿԱՄՍ ՆՕՐ ԵՒ ՈՐԴՈՅՆ ՈՐ Ա  
ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ԶՕՐՈՒԹԵԱՄԲ ՀՈԳՈՅՆ ՍՐԲՈՅ

ԳԼՈՒԽ Ա ՎԱՄՆ ՎԻՃԱԿԻ ԴԱՏԱԻՈՐԱ

Եկեացուք այժմ իսկ ի գործ դատաստանի՝ գիտելով, զի ըստ քաղաքաց  
դատաւորս հրամայէ լինել Մովսէս եւ նոցունց դպիրս, յորոց յայտ է, զի ոչ  
զամենայն գրով աւանդեաց Մովսէս զիրս դատաստանի, այլ՝ տեսակս սակաւ, եւ  
ի դատաւորս ապաստան արար ի զանազան իրս եւ ի ժամանակս: Եւ վասն այն  
գդպիրս նոցա կարգեաց, զի զեղեալ դատաստանս նոցա գրով պահեցեն: Ըստ  
որում եւ մերս եղիցի, որպէս յառաջ իսկ ասացաւ: Եւ արդ, նախ զայս եւս  
տեսցուք, զի պարտ է, որ դատաւորք հոռք եւ պարզեւք ունիցին ի թագաւորաց, զի  
մի՛ ձանձրասցին ի դատելոյն. զնոյն եւ եկեղեցոյ դատաւորքն, որ են  
եպիսկոպոսք, պարզեւս մեծամեծս կալցեն ի կաթողիկոսէն լիապէս, զի մի՛  
յաղագս աղքատութեան թիրեցեն զուղիղ դատաստանս Աստուծոյ: Եւ արդ,  
այսպէս լիցի: Եթէ մեռանիցի այր ոք եւ ուստր ոչ ունիցի, եւ ոչ դուստր, եւ ոչ այլ  
ոք ի ցեղից հարց նորս, ժառանգութիւն նորս եպիսկոպոսաց լիցի: Բայց այսպէս  
արասցեն. զի եթէ ի կաթողիկոսի վիճակ եղիցի անժառանգ վախճանեալն,  
կաթողիկոսին եղիցի ինչքն, եւ եթէ յեպիսկոպոսի՝ եպիսկոպոսն երեք բաժին  
առնէ զինչս մեռելոյն եւ զմինն իրն առցէ, եւ զմիւսն կաթողիկոսին տացէ, եւ

գմիւսն այլ՝ քահանայիցն: Եւ թէ թիմին վարդապետ կայ, ի վեց բաժնեն, գմիսն նմա տան եւ զայն սպա երեք բաժին արասցեն:

Իսկ աշխարհական դատաւորաց ոչ տան մասն, վասն զի այսօր են եւ վաղն չեն: Ապա եկեղեցոյ դատաւորք հայրք են հոգոց եւ մարմնոց եւ նոքա պարտին հատուցումն առնել ննջեցելոց: Իսկ սիրոյ աղագաւ, վասն աշխատութեան դատաստանին, տացեն մասն ինչ մարմնաւոր դատաւորաց, այլ ոչ օրինօք, այլ ըստ պատահման:

Ապա թէ կրօնաւոր վախճանի ի վանքն, զիր իրքն իրքն առցեն՝ զինչ մարդոյ որ ընկերակից էր, եւ թէ աշակերտ ունի՝ նա ժառանգէ, եւ թէ վարդապետ՝ նա, եւ մի՛ մարմնաւոր ազգն՝ եղբայր, կամ հայր, կամ ազգական, այլ հոգեւորքն, եւ գմատղենիքն եւ զայլ մահու իրաւունքն հօր վանացն տացեն, զի մոնոզոնքն ի նմանէ ձեռնադրին, եւ վասն այսորիկ նա ժառանգէ, զի իր ձեռնադրեալն է: Եւ թէ չունենայ մոնոզոնն, որ մեռանի, մօտ ի յինքն աշակերտ կամ վարդապետ, հայր վանացն ժառանգէ զինչս նորա, եւ գմատղին իրաւունքն եւ գմահուն եպիսկոպոսին տան:

Իսկ հաւատաւոր կանայք, թէ յաշխարհական քահանայէ ձեռնադրի եւ մօտ ի նա վախճանի, նա ժառանգէ զինչս նորա. եւ եթէ ի վանք ձեռնադրի եւ մօտ ի նոսա վախճանի, նոքա ժառանգեն գնա, եւ մի՛ եպիսկոպոսք արկցեն ձեռն ի նոսա: Իսկ եթէ օրինած երէց է աբեղայն, որ վախճանի եւ ոչ ունենա վարդապետ կամ աշակերտ, որ ի կենդանութեանն մի էին, եպիսկոպոսն ժառանգէ, եւ գմատղենիքն հօր վանացն տացեն, եւ թէ իցէ հոգեւոր ժառանգ՝ զինչսն նմա տացեն եւ գմատղենին եւ գմահուն իրաւունքն՝ եպիսկոպոսին:

Այս դատաստան հաստատուն կացցէ եւ սենեկաւորացն, իսկ միայնակեացք միաբանք իրեանք զիրեանք ժառանգեն: Բայց եթէ երէց աբեղայ հանդիպի ի միջի նոցա, զհանդերձն եւ գմատղենին եպիսկոպոսին տացեն եւ զայլ ստացուածսն ի մէջ եղբարցն հաւասար բաժանեն: Նմանապէս եթէ եպիսկոպոս փոխեսցի մահուամբ առ Քրիստոս եւ ունիցի աշակերտ ժառանգ կամ այլ հոգեւոր եղբայր, ընդ որ ինքն կամեսցի եւ հաճեսցի՝ նա ժառանգեսցէ զինչս նորա, իսկ զհանդերձսն, եւ զգաւագանն եւ զմեռոնն, եւ զայլ ընծայս տացեն կաթողիկոսին, զի նա է ձեռնադրող նորա եւ դատաւոր, եւ գմատղենին եւ

գմեռելոյթսն տացեն դրան եպիսկոպոսին: Իսկ ի կաթողիկոսի դարպասն զինչ մատաղ առնէ ի տօնս տէրունականս, իւր եկեղեցպանուն լիցի: Իսկ թէ հանդիպի, որ մեռանի յիւրոց ազգականացն, եւ կամ մատաղ առնէ իւր ննջեցելոցն, եւ կամ պսակէ յիւրոց ազգականացն, այսոցիկ իրաւունքն յիւր դրան եպիսկոպոսացն վերայ բաժանեացի եւ ի վերայ վարդապետացն: Իսկ եթէ վախճան հանդիպի կաթողիկոսին, իւր ամենայն ստացուածք եւ գանձք եկեղեցոյն եւ աթոռոյն մնասցէ անփոփոխ, եւ զենմունք եւ այլ հոգոյ ընծայք բաշխեացեն առհասարակ ի վերայ եկեղեցականաց ըստ արժանեացն: Այս եղիցի իրաւունք ի դատաստանս եկեղեցոյ. եւ մի ոք ի վերայ իրաւանց ընկերին ելցէ, զի մի՛ մնասցէ ի ներքոյ անաշատ դատաւորին մերոյ Յիսուսի Քրիստոսի:

## ԳԼՈՒԽ Բ ՎԱՍՆ ԹԱԳԱԻՈՐԱՅ ԴԱՏԱՍՏԱՆԻ ԵՒ ՈՐՔ ԸՆԴ ՁԵՌԱՄԲ ՆՈՅԱ

Նախ զի եղաք զվիճակս եւ զդատաստանս եպիսկոպոսաց, զի առաջին է պատիւ նոցա եւ հարկաւոր: Իսկ երկրորդ դիցուք զդատաստանս թագաւորաց: Բայց զիտելի է, զի թագաւոր տիրապէս աստուած է, եւ մարդիկ՝ անուամբ միայն: արդ, եթէ պատահի թագաւորի մեռանել եւ ունիցի ուստերս եւ դստերս, պարտ է զինչսն հաւասար բաժանել եւ անդրանկին տալ զթագաւորութիւնն, իսկ որ յառաջադէմ լիցի եւ իմաստուն յորդիսն, յաթոռն նստուցանեն: Իսկ եթէ եղբայրք ունի թագաւորն, նոքա նստցին, մինչեւ այլ ոչ իցեն, քանզի ոչ է իրաւացի, զի մինչ եղբայրքն կենդանի իցեն, որդիքն նստցին, այլ՝ յետ մահուան եղբարցն: Եւ եթէ դուստր իցէ նորա, կէս եղբօր մասն աոցէ հանդերձ արամբն: Եւ եթէ մահուամբ բարձցին թագաւորք եւ որդիք նոցա, եւ որդիք լիցին որդոյն եւ դստեր որդիք, որդիք որդոյն ժառանգեցեն զաթոռն եւ ոչ որդի դստերն, եւ որքան յորդոցն իցէ ի ծննդոց, դստերն մի՛ աոցէ, ապա թէ աոցէ՝ յօտարս համարեացի: Չի այդպէս մեծն արքայ Աբգարիոս կարգեաց գտուն թագաւորութեանն Պարսից: Եւ նահապետն Նոյ ընդ որդիսն եւ ընդ դստերն ետ մասն վիճակի զկողմն հարաւոյ, ըստ որում եւ կանայք թագաւորեն կողմանցն, զոր եւ Սողոմոն էած երբեմն զդշխոյն հարաւոյ, զոր եւ Տէրն իսկ վկայէ յԱւետարանի անդ: Սակայն զանդրանիկն իսկ պատուէ ընտիր վիճակաւ, զոր եւ Օրէնքն կրկին հրամայէ տալ: Ի դէպ է, թէ եւ դստերն իբր զկէս եղբօր տայ վիճակ, սակայն թագաւոր է իբր նախնի եղեալ: Իսկ եթէ ուստր չիցէ, եւ դուստր իցէ, տացէ զթագ իւր դստերն: Եւ

ունինք հաստատուն վկայ զՕրէնսն. եթէ որ մեռանիցի, ասէ, եւ դուստր իցէ նմա եւ ոչ ուստր, զժառանգութիւն իւր նմա տացէ: Եւ առեալ այր՝ զթագ իւր նմա տացէ՝ իշխան է դուստրն, բայց զկնի մահուան նորա իբրեւ յօտարս համարեացի ծնունդք նորա: Ապա թէ որ ասիցէ՝ զհա՞րդ ոչ ըստ օրինաց կողմանցն հարաւոյ իշխան լիցի ինքն թագաւորել, այլ առնն տալ, գիտացէ, զի անդ սովորութիւնն զայնոսիկ յառաջէ, այլ ըստ գրոց դատաստանի զայդպիսիդ հաստատուն կարծեմ: Եւ եթէ կտակ արասցէ արքայ, որքան կենդանի է, իշխան լիցի փոխել գնա ըստ արժանոյն, զի կտակ յետ մահու հաստատուն է, ըստ առաքելոյն, որպէս արքայ Կոստանդիանոս կտակաւ թագաւորեցուցանէր զորդիս իւր եւ զսահմանս լերամբք եւ գետօք հաստատէր եւ արձանօք, ըստ առաջին թագաւորացն: Եւ թէ չիցէ բնաւ ժառանգ ի ցեղէ հարց մինչեւ ի չորրորդ զարմն, իշխան լիցի տալ զթագ իւր օտարի՝ ոչ ըստ կրօնից, որպէս որդի թագաւորին Հնդկաց եւ Մակեդոնացին Աղէկսանդր, եւ զայլ եւս մատակարարութիւն թողու ի Տէր: Բայց ի թագաւորեցուցանելն մի՛ առանց հրամանի հայրապետին լիցի: Եւ եթէ շինիցէ քաղաք կամ բերդ, եւ թէ աշխարահագիր առնիցէ, եւ թէ դահեկան կամ դրամ հատանիցէ, ինքնիշխան կամօք արասցէ, ըստ օրինաց դատաստանի: Այլ իշխանաց ոչ է պարտ դահեկան կամ դրամ հատանել եւ եթէ հատանիցէ, թագաւորին կամօք լիցի: Նոյնպէս շինել կամուրջ ի վերայ մեծամեծ գետոց՝ թագաւորաց լիցի: Իշխանք զթագաւորաց զգեստ մի՛ զգեցցին, մինչեւ նոքա հրամայիցեն կամ պարգեւեցեն: Առաջի արքայի մեծամեծ իշխանք մի՛ նստցին, բայց եթէ հրամայեցեն: Ի սեղանն արքայի, բայց ի հայրապետէ, մի՛ որ նստցի, առանց հրամանի նորա: Ի յարքունիս արքային մի՛ որ նստցի, բայց ի հայրապետէն: Իսկ արքայ ի տունս հայրապետի ոչ նստցի, միայն հրամանաւ: Մի՛ լիցի քրիստոնեայ թագաւորի հարձօք վարիլ, որպէս անօրէն արքայ, զի իշխանութիւն է նմա ընդ հայրապետին ի բեմն ելանել: Դատաստանաւ վարեացի յամենայն իրս եւ ի գործս արքայն: Եթէ պատահի պատերազմել ընդ այլազգիս հարկաւորաբար, յորժամ սուրն վերացի, հրաման մի՛ տացէ այլ սպանութիւն առնել: Եւ եթէ պաշարեացէ զքաղաք այլազգեաց, նախ ի խաղաղութիւն կոչեացէ գնոսա մի անգամ, եւ երկիցս, եւ երիցս. եւ թէ ոչ կամիցին գալ, եւ բռնաբար առցէ զքաղաքն, զայնոսիկ, որ ոչ կամէին զխաղաղութիւն, որով սպանանէ եւ զայլսն ընդ հարկի ածցէ, ապա թէ եւ նոքա հակառակին, սատակեացէ գնոսա, իսկ զգլխաւորսն ոչ եւս: Եւ ի պաշարել արքայի զքաղաքս ոչ է պարտ զժառս պտղաբերս կտրել: Զքաղաքատուրս եւ զբերդատուրս, եթէ յառաջ քան զչարն ի

գլուխ հանելն յայտնեսցին իրքն, մահու մատնեսցին, իսկ եթէ գնով գնեսցէ զանձն իւր, փրկեսցի, ապա զաշան հանիցեն եւ զկինն եւ զորդիսն յարքունիսն ծառայ առցեն եւ զինքն յայլ աշխարհ վարեսցեն մերկ եւ անաչք: Ապա թէ զշարն ի գլուխ հանիցէ, եւ ընդ ձեռանք ածցեն գնա, անողորմ սպանցի. այս դատաստանս այլազգոյ է, թէ հանդիպի: Իսկ եթէ քրիստոնեայ իցէ եւ մատնիցէ քաղաք կամ բերդ ի ձեռս անօրինաց կամ ի ձեռս քրիստոնէից, գնոյն արասցեն. զկին եւ զորդիսն եւ զստացուածս առցեն եւ զինքն յաշան խրատեսցեն եւ յայլ աշխարհ վարեսցեն եւ մի՛ սպանցեն վասն մարդասիրին Քրիստոսի: Եւ զգող զանձուն տէրունի. զայլազգիսն՝ հանցեն զաշան կամ կտրեսցեն զձեռսն եւ զկինն, եւ զորդիսն, եւ զինչսն առցեն յարքունիս եւ զինքն տարագիր արասցեն, եւ զքրիստոնեայ գողն՝ առնուն յիւրմէն գոր գողացեալն է, եւ զտունն, եւ զինչսն, գոր ունի, եւ զանձն իւր ծախեսցեն եւ զգինսն առցեն եւ զորդիսն եւ զկինն ազատեսցեն: Իսկ եթէ սպանցէ այլազգի զքրիստոնեայ կամաւ, սպանցի փոխանակ նորա, ապա թէ ակամայ՝ կտրեսցեն զաջ ձեռն եւ զգին մարդոյն առցեն ի նմանէ: Իսկ զին մարդոյ ըստ արժանոյն զին ոչ գոյ, քանզի գործ է Աստուծոյ եւ պատկեր, եւ յարուցանել զմեռեալս միայն կարողութիւն է Աստուծոյ: Բայց մի՛ ոք զՅովսէփայն կամ զՔրիստոսի գինն կարծիցէ ճշմարիտ քսան կամ երեսուն, զի գողք իսկ էին վաճառողքն: Այլ զին մարդոյ ըստ թուոյ ասուրց տարոյ կարծեն երեքհարիւր վաթսուն եւ հինգ դահեկան ոսկի, եւ դեկանն՝ երեքտասան դրամ արծաթ: Այս զին ըստ բանականին շնորհի, իսկ քրիստոնէին՝ կրկին եւ ըստ աստիճանաց յաւելցի, իսկ այլազգեաց՝ յերկից մասանց մինն լիցի՝ հարիւր քսան եւ երկու դեկան եւ երկու քարտէզ, քանզի ոչ ունին զշնորհս ասագանին: Ապա թէ շիցէ կարողութիւն հատուցանել, վաճառեսցեն զսպանողն եւ զգինն յարենտէրքն տան եւ զտունն յաւար առնուն յարքունիսն: Եթէ քրիստոնեայ զայլազգի սպանանէ կամաւ, զգին արեանն առցեն՝ հարիւր քսան եւ երկու դահեկան, եւ թէ ակամայ՝ վաթսուն եւ մի դահեկան եւ զգինսն յարքունիսն առցեն, բայց յերկից մասանցն զմինն իւրոցն տայցեն: Իսկ եթէ քրիստոնեայ զքրիստոնեայ սպանանէ կամաւ, զգինն յարենտէրքն տան եւ արքայի տուգանքն ըստ կարողութեան առցեն: Եւ թէպէտ ըստ Օրինացն մահու արժան է, այլ զձեռն հատեալ՝ ապաշխարութեան հասցէ. ապա թէ աղքատ է, վաճառեսցի իւրովքն յազգս իւր եւ հատուցէ: Ապա թէ ակամայ՝ զկէս գնոյն առցեն եւ տան յարենտէրքն, եւ արքային՝ ըստ կարոյն տուգանք, բայց զձեռն մի՛ հասցեն: Չայդոսիկ թագաւորն դատիցի եւ զայլ եւս դատաստանսն ի դատաւորսն թողցէ, եւ զծածուկ մեղսն

գամենայն՝ յառաջնորդսն: Իշխանաց մի՛ լիցի զսպանողսն սպանանել առանց հրամանի թագաւորին, իսկ զգողսն խրատել իշխան լիցի: Ազատք առանց հրամանի իշխանաց մի՛ իշխեսցեն զգողսն խրատել: Եթէ պատահի երթալ թագաւորի յաւար զօրօք եւ աւար առեալ դարձցի, ոսկի գտեալ՝ արքային լիցի: Բայց մի՛ երդմամբ առցէ, այլ քարոզ կարդասցէ ի ժողովն, զի թէ յետոյ առ ոք գտցի, ընդ միոյ եւթն տուժեցի: Բայց թագաւորն ի տասնէն զմինն կաթողիկոսին տացէ յամենայնէ: Գերոյն եւ աւարոյն կէսն արքային լիցի, եւ կէսն՝ զօրացն: Իւրաքանչիւր իշխանքն զնոյն բաժին արասցեն եւ տասանորդս տացեն յեկեղեցին: Իսկ եթէ չիցէ արքայ ընդ զօրսն, այլ իշխանք միայն՝ զօրօք իւրեանց, նոյնպէս ոսկին արքային լիցի, եւ գերին եւ աւարն՝ տասանորդս արքայի, իսկ յեկեղեցի՝ ի յիսնէն մինն ըստ Օրինացն: Փողս եւ դրօշս պարտ է տալ իշխանի ի վերայ գաւառի եւ բերդի: Գողս եւ աւագակս ոչ վայել է թագաւորի եւ իշխանի, բայց միայն լրտեսս, որ է ջաշուշ: Զօրք եւ իշխանք, եթէ հրամանաւ արքայի յաւար երթիցեն ըստ պատահման անկասկած, կէս աւարոյն եւ գերոյն արքային լիցի, եւ կէսն՝ զօրացն, իսկ եթէ առանց հրամանի երթիցեն՝ երկու բաժին երթողին լիցի, քանզի կամօք ի մահ դիմեցին: Զայս ըստ սովորութեան ասացաք, զի ոչ է հրաման ի գրոց. զի ի պատերազմի զօրականի մեռանել՝ անպարտ է տէրն, որ առաքեացն զնա: Իսկ եթէ գող առաքեացէ, եւ մեռանիցի, պարտապան արեան նորա նա եղիցի, որ առաքեացն զնա: Իսկ եթէ գողն հրամանաւ իւրով երթիցէ ի գողութիւն եւ մեռանի, արիւն նորա ի գլուխ նորա: Եւ գոր առաքեացէ արքայ կամ իշխան ի գողութիւն, եւ ըմբռնեցի, որ առաքեացն զնա, նա գնեցէ, իսկ եթէ կամաւ իւրով երթիցէ առանց հրամանի, ինքն զինքն գնեցէ: Զօրական եթէ ի պատերազմի գոք ըմբռնեցէ, զգեստն, եւ զէնքն, եւ երիվարն նորա լիցի, իսկ զրահն՝ թագաւորին: Ոսկի, ակունք եւ կերպաս ամենայն կերպիւ, գորս առցեն յաւարի, թագաւորաց բաժին է, իսկ արծաթ եւ մարգարիտ՝ իշխանաց, նոյն եւ ասրեղէն պատուական. իսկ անարգ ասրեղէն, եւ կտաւ, եւ պղինձ, եւ երկաթ եւ այլ այսպիսի, զօրացն լիցի: Իսկ զհարկս գաւառաց եւ ազգաց թագաւորք եւ իշխանք արդարութեամբ առցեն եւ մի՛ ինչ աւելի, քան զառաջնոցն սովորութիւն, կալցեն, զի ընդ ամենայնի համարս ունին տալ Աստուծոյ, զի յԱստուծոյ կարգեցան ի պահպանութիւն եւ ի փրկութիւն աշխարհի եւ ոչ ի կործանումն: Եւ արդ, այսպէս լիցի: Զանդաստանացն զհինգերորդ մասն առցեն, որպէս օրինադրեաց յԵգիպտոս, որ կոչի մինչեւ ցայսօր հնկակ, զի յորժամ ստացաւ գերկիրն փարաւոնի, յայնժամ զհինգերորդն կարգեաց. յայտ է, զի յառաջ ոչ էին

հնկակ, այլ հայրենի կտոր, սակաւ եղեալ ունէին արծաթ համարով: Սոյնպէս եւ  
այժմ լիցի, զի արծաթագին անդաստան, եւ այգի, եւ դրախտ մի՛ լիցի ի նմանէ  
հնկակ, նմանապէս եւ՝ ջրաղաց, եւ տուն, եւ խանութ: Այլ թէ բնակիչքն  
արուեստաւորք են, իրաւամբ լիցի, որ ինչ պարտ իցէ, զի ոչ է հարկ գլխոյ  
քրիստոնէից, բայց միայն այլազգեաց: Արտորայք ջրարբիք ընդ հնկեկի լիցին,  
իսկ դրախտք՝ տասանորդեցին, զի հող միայն է թագաւորի եւ իշխանի եւ ոչ  
ջոր: Սոյնպէս՝ այգիք եւ ծառատունկք: Այսպէս եւ յաւորս շաբաթոյ յետմէ մինն  
թագաւորաց եւ իշխանաց վաստակեցեն շինականք: Եզին առանձին այլ հարկ  
թագաւորի եւ իշխանի մի՛ լիցի, զի այն է իսկ, զոր աշխատեալ է հնկեկի: Կովու  
հարիւր դրամ կշիռ եղ տացեն: Ոչխարք ի գառինս տասանորդեցեն: Ձիոյ, եւ  
ջորոյ, եւ իշխոյ մի՛ լիցին հարկք, միայն պատահմամբ ծառայել նորօք  
գտէրունիսն: Ի տարեմուտս ըստ կարողութեան լիցի ծառայել, նոյնպէս եւ յաւորս  
տօնից: Չէքչէք բազում մի՛ լիցի ի վերայ քրիստոնէից, զի եւ սահմանքդ բազում  
եւ յաւելորդ կարգեցաւ: Առանց դատաստանի եւ բազում քննութեան մի՛  
տուգանեցեն զայնոսիկ, որ տէրունի իրաց յանցաւոր լեալ իցեն, եւ այն՝ ըստ  
կարողութեան, իսկ յայս յանցաւոր գտեալ՝ դատաւորք վճռեցեն: Թագաւոր  
իշխանի տուեալ գաւառ, եթէ շինէ ի նմա բերդ՝ հրամանաւ թագաւորին, կամ գեղ,  
կամ ագարակ, կամ հոգւտուն եւ կամ այլ ինչ նոր շէն, ի ժառանգութիւն նորա  
համարեցի ազգէ յազգ: Սոյնպէս ընդ ձեռամբ իշխանաց ազատք լիցին, եւ ընդ  
ձեռամբ ազատացն՝ շինականք. յորժամ աւերս շինեցեն եւ հողս հատանիցեն ի  
մայրեաց, ստացուածս լիցի նոցա անփոփոխ եւ որդոց նոցա յետ մահոյ: Այլ  
փոփոխումն ի վերայ մեծի յանցանաց եւ իրաւանց լիցի: Նոր շինեալ տեղեաց  
ազատութիւն լիցի, մինչ զի ամենայնիւ հաստատեցի: Ի շինուածս քաղաքի եւ  
բերդի, եթէ պակասեցի գանձ արքունի, ամենեքեան առահասարակ օգնեցեն՝  
գեղացիք եւ քաղաքացիք: Արք քաղաքացիք առաւել պատուեցին, քան  
զգեղացիս, եւ գեղացիք՝ քան զագարակցիս: Սոյնպէս լիցի բերդից եւ աւանից:  
Հարկաւորք եւ օգտակարք յարուեստս հողագործութիւնն է, եւ դարբնութիւն, եւ  
հիւսնութիւն. եւս բազմաց է հողագործել: Առաւել պատուեցի երկաթագործ եւ  
փայտակոփ: Իսկ բժիշկք եւս առաւել պատուեցին: Եւ վարդապետք գերագոյն  
պատուեցին ի թագաւորաց եւ յամենեցունց, զի բժիշկ եւ հայր է հոգոց: